Կյանքի և մահվան դիալեկտիկան հայ գրականության մեջ

Դավթյան Վ.Ս.
Երևանի հյուսիսային համալսարան (Հայաստան, Երևան)
varduhidavtyan@mail.ru

Վճռորոշ բառեր՝ կյանք, մահ, մարդ, կյանքի ու մահվան դիալեկտիկա

Диалекика жизни и смерти в армянской литературе

Давтян В.С.
Северный университет Еревана (Армения, Ереван)
varduhidavtyan@mail.ru

Резюме: Извечные проблемы человеческих судеб, их спасения кажущиеся мистическими вопроси параллельного мира создали неразрешимую тему жизни и смерти в литературе, религии и философии. В частности, в литературе, в контексте углубленного анализа данных систем, в концепте "Человека", как наивысший ценности, раскрывается важнейшая проблемса бытия- счастья жизни. Формула "извечной темы" будучи исследованной литературоведами, включает в себе концепт смерти. В литературе тема смерти была и остается одна из доминантных.

Ключевые слова: жизн, смерть, человек, диалектика жизни и смерти.

The Dialectics Between Life and Death in the Armenian Literature.

Davtyan V. S.
North University of Yerevan (Armenia, Yerevan)
varduhidavtyan@mail.ru

Abstract: The issues of human fates, their salvation and survival and the eristance of a parallel world have raised the eternal question of life and death on philosophy, religion and literature. In literature, in particular, in the cousse of a minute study, the value of a “human being” reveals one of the most important questions- the happiness of living. The concept of an “eternal theme” is treated by the literary theoreticians as a phenomenon of death. The predominance of the concept “death” on literature remains an undisputable one.

Keywords: death, life, human,dialectics between Life and Death.

Մարդկային ճակատագրի, մարդու փրկության, առեղծված թվացող այնկողմնային աշխարհի մշտակա խնդիրները գրականության, կրոնի, փիլիսոփայության մեջ ձևավորել են կյանքի և մահվան հավերժական թեմաները: Մասնավորապես գրականության մեջ այս համակարգերի խորքային քննության համապատկերում «Մարդ» արժեքի բարձրագույն ըմբռնման մեջ բացվում է կեցության կարևոր խնդիրներից մեկը՝ ապրելու երջանկությունը: Մարդը ծնվում է լինելիության խորհրդով, կեցության բնազդական այն համառությամբ, թե չպետք է բաց թողնել քեզ բաժին հասած կյանքը:

Ժամանակի անընդմեջ փոփոխվող շրջապտույտի մեջ վերաձևվում են կյանքի և մահվան փոխկապակցված հարցերի մեկնությունները, առաջ են գալիս կյանքի խորհրդի տարիմաստ ընկալումներ:

Անցյալ դարի վերջին երկարատև արգելքներից հետո հետմահու վերագնահատվեց հնդիկ հոգևոր առաջնորդ Բխագվան Շրի Ռաջնիշը, առավել հայտնի՝ «Օշո» անունով, որն իր կրոնական և մշակութային ոգեշնչումների մեջ բանաձևեց համամարդկային կենսական ճշմարտություններ: Կյանքը աստվածացնող և մահվան անճանաչությունը ճշգրտող Օշոն կրոնափիլիսոփայական հանձնառությամբ մահը համարեց նոր կյանքի սկիզբ, մի բանի վերջ, որն արդեն մահացել է, ավելին, կյանքի կուլմինացիա, դուռ՝ երկու կյանքերի միջև, որոնցից մեկն ավարտվեց, մնաց հետևում, իսկ մյուսը սպասում է ապագայի մեջ իր բացվելուն: Սա մի տեսակ հաշտեցման «արարողակարգ» էր կյանքի, մահվան և մարդու միջև: Երկու անխուսափելիությունները՝ մարդուց անբաժան, հաջորդում են իրար, և մարդը, սկսելով մեկից, բաց չթողնելով կյանքը, չպետք է միայն շնչի կամ շարունակի ծերանալ՝ սեփական գոյությունը դարձնելով յոթանասուն կամ ութսունամյա աստիճանական մահ: Անհրաժեշտ է վայելել կյանքի անա-

կնկալությունը, բարձրագույն այն գիտակցությամբ, որ կյանքի դինամիկ, հարաշարժ ընթացքին գույն, հոտ, իմաստ հաղորդողը ինքդ ես, և ոչ ոք քեզնից բացի:

Ավելի հաճախ մարդիկ սարսափում են մահից, խուսափում բարձրաձայնել սահմռոկեցնող այս բառը, թեև շրջանցելով մահվան թեման և խուսափելով նրա հետ հնարավոր բոլոր հանդիպումներից՝ մարդը երբեմն խիզախում է մատչել նրան, դուրս գալ մահվանն ընդառաջ՝ հաշտության ձեռք մեկնելով կամ ընդվզելով նրա դեմ, պայծառամտորեն ծավալելով «հավիտենական զրույց» մահվան կերպարի հետ:

Մահը որակական երևույթ է: Մահվան վերապրումը նորացնում է կյանքը: Ամեն ինչի մահացման և կրկին ծաղկելու գործընթացը դառնում է կեցության հավերժական շրջապտույտի խորհրդանիշ՝ քրիստոնեական խորհրդով:

Դեռևս հայ հին գրականության և մասնավորապես շարականգրության մեջ (5-րդ դար) կյանքի և մահվան հարցերը միախառնվում էին ճշմարիտ կեցության, մեղսազուրկ կյանքի, Աստծու կողմից ընդունելի լինելու տրամադրություններին: Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևը իրենց սքանչելի շարականներում փառաբանության, բարեբանության աստվածառաք խոսքերի հետ Աստծուն խնդրում էին նաև ապրեցնել իրենց: «Կեցո՛ ըզմեզ»[1],- ակնկալությամբ դիմում էր Տիրոջը Ս. Պարթևը, «Ապրեցո՛ եւ ողորմեա՛»[2],- խոնարհաբար աղերսում էր Մ. Մաշտոցը:

Մահվան ներթաքույց սպասումն ու քրիստոնեական նախապատրաստությունը իրենց գեղարվեստական արտահայտությունը գտան գրեթե բոլոր շարականգիրների մոտ, սակայն ավելի ուշ՝ 10-րդ դարում, հատկապես Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի մեջ նկատում ենք կենսահորդ տրամադրությունների ներհոսք, ավելին, տաղերգուն չի ցնծում մահվան առաջիկա կանխավայելքից: Իրեն համարելով «մահու մեղապարտ»՝ քննում է կյանքի ունայնությունն ու անցողիկությունը, շեշտում մարդկային այն մեծագույն ողբերգությունը, որը նաև մահվան անխուսափելիության գիտակցության ծնունդն է: Գ. Նարեկացին լեցուն է կյանքի նկատմամբ սիրով: Նրա պոեմում բազմիցս կրկնվում են «ապրեցրո՛ւ», «կենսագործի՛ր», «կենդանական շո՛ւնչ ընծայիր», «հանի՛ր մահվան խոր անդունդից» աղերսանք-պահանջները՝ ապրելու անկասելի մղումով: Պարույր Սևակի դիպուկ մակդիրավորմամբ՝ «մարդախույզ», «մարդագիր», «մարդերգու» Գ. Նարեկացին քիչ է ասել՝ սիրում է մարդուն: Նա մահը՝ որպես մարդուն բաժին հասած անխուսափելի ողբերգություն, թանձրագույն վերարտադրում է սեփական մահվան, «մեռած դրության», «թշվառ կիսամեռության» գեղարվեստական նկարագրությունների մեջ՝ ակամա հիշեցնելով իրենից շատշատ հետո՝ 20-րդ դարում Առաջին աշխարհամարտին հաջորդած տարիներին զարգացող սյուրռեալիստական գրականության ներկայացուցիչներից մեկի՝ ֆրանսիացի Բորիս Վիանի՝ մահվան վերաբերյալ էքսցենտրիկ ընկալումները: Բ. Վիանը ևս սեփական մահվան վերարտադրությամբ՝ «Ես կմեռնեմ ողնաշարի քաղցկեղից…» էպոտաժային ձևակերպմամբ, վկայում է կյանքի քառսայնությունը, ուր ողջ մնալ հնարավոր չէ, ուստի այլ բան չի մնում, քան վայելել հասանելիք կյանքը:

Մահը երաշխավորված է բոլորին, իսկ կյանքը երաշխավորված չէ ոչ ոքի: Սա գիտակցում է նաև միջնադարյան տաղերգուն՝ շարունակելով «պնդել» իր աղերսանքները՝ պաշտպանվելու, նորոգվելու, բժշկվելու վերստին հույսով տոգորված: Ապրելու կենսական բանաձևը մարդու գերագույն նպատակն է: Կյանքի և մահվան չստացվող երկխոսությունը թուլանում է վերածննդյան հումանիզմի հարթակի վրա, և Նարեկա վանականը մարդու ապրելու անկասելի մղումը իրացնում է միանգամայն բնական ձգտումով՝ հետևյալ պայման-խնդրանքով՝

Եվ եթե հասնեմ խորին ծերության քո
առաջնորդությամբ՝ մահվան արժանիս՝
Մի՛ լքիր ինձ տկարությանս մեջ և մի՛
անարգիր մազերս սպիտակ,
Մի՛ կործանիր կործանվածին և կքյալին մի՛
իջեցնի,

[1] Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա, Եր., 1979, էջ 11:
[2] Նույնը, էջ 14:

Մի՛ ցած բեր խոնարհվածին և առկայծյալին
հողմի շնչին մի՛ մատնիր...[3]

Աստծուն հասցեագրված կենսագործվելու պահանջը, նրանից սպասվող կամենալու և փրկելու քերթողի ակնարկի երանգները գնալով թանձրանում են, և արդեն հետագա դարերում՝ հատկապես Ֆրիկի (13-րդ դար) մոտ, մահվան վրա ասված ողբը աղաչախառն ուղղվում է աստծուն՝ ունկնդիր դարձնելու իր՝ մեղավորի հետևյալ խոսքերին.

Որ երբ մահն ինձ հանդիպի,
Նա օրհնեալ հողըն ծածկէ զիս:[4]

Մահվան սպասումը քերթողի մտքի մեջ է, և «էգուց մեռնելու» պայմանը ենթադրում է «ճար անելու» անհրաժեշտություն: Մահը նետվում է առաջ, «անողորմ գրողը» ոչ ոքի չի խնայում, և Ֆրիկի հոգեշահ խոսքերը խրատալից հնչելով գրեթե յուրաքանչյուր բանքում՝ փորձում են հավասարակշռել հոգու և մարմնի՝ անընդմեջ վերուվարվող նժարները:

Ֆրիկը Գ. Նարեկացու չափ սիրում է կյանքը՝ միաժամանակ գիտակցելով այն անբեկանելի ճշմարտությունը, թե «զինչ ծնեալ կայ՝ մեռանի, մահն ամենին հաւասար կու գայ»:[5] Ընդհանրապես կյանքի և մահվան հարցերում Ֆրիկի տրամադրությունը կարելի է բնութագրել այսպես. քերթողն անուղղելի կենսասեր է, բայց հաջորդիվ ներխուժում է «յայս կեանըս շահ չի կայ» կրոնական խոստովանանքը, և աղոթքի, անարժան լինելու վախի թրթիռները վերածվում են աստվածաբանական, դավանաբանական խրատասացության:

Կյանքի և մահվան թեմայի խաղարկումը միջնադարյան գրականության մեջ երբեմն ենթարկվում է ռացիոնալ մեկնության: Միջնադարյան հոգևորական, բանաստեղծ Հովհաննես Պլուզ Վարդապետը (13-րդ դար) բանական հիմնավորմամբ է բացատրում մահը՝ որպես մարմնի, նյութի քայքայման կենսաբանական գործառույթ: «Մարդիկ զինչ զարնան ծաղիկ փթթին ու այլվի չորանան»[6],- կուռ տրամաբանությամբ գրում է Հովհաննես Պլուզն իր կաֆաներից մեկում: Վարդապետը լավ գիտի, թե որտեղ է կյանքի սկիզբն ու «հատը», մնում է՝ «ճամփորդը» գիտենա, թե որն է իր կյանքի նպատակն ու իմաստը: Հովհաննես Պլուզը մարդու կյանքում կարևորում է ապրելու պատասխանատվությունը.

Եկել ես օտար յերկիր, մէկ ցուցու, թէ ինչու՞
կու կենաս.
Մեռնիս դու ' ւ ի հող մըտնիս, մէկ ասա, թէ
ու՞ր կու գնաս:[7]

Կյանքի ու մահվան իմացական դարձվածքի խորհրդի մեջ միջնադարյան մտածողն ու քերթողը անընդմեջ տարուբերվում է. Գերազանցությունը որի՞ն տալ, ինչպե՞ս ձևակերպել ապրելու կենսական բանաձևը. տուրք տալ կյանքի՞ն, ապրելու գայթակղությա՞նը, թե՞ ծնված օրից պատրաստվել մահին՝ կամաց-կամաց հանգրվանելով սեփական մարմին-նավը «մահվան նավահանգստում»:

Սակայն միջնադարյան տաղերգության ներքին բովանդակության մեջ կրոնական պատկեր - խորհրդանիշներին զուգահեռ ներթափանցող աշխարհիկ զգացումները, գեղեցիկի փառաբանման քնարական դրսևորումներն իրենց հետ բերեցին մահվան հետ «հաշվեհարդարի» նստելու հանդգնություն:

Է մահ, քանի ըզքեզ յիշեմ
Կու դողամ ու սարսափիմ ես.
Չըկայ քան ըզքեզ լեղի,
Ի՝ ամենայն լեղոյ լեղի ես[8],-

գրում է միջնադարյան տաղերգուներից մեկը՝ Հովհաննես Թլկուրանցին (14-15-րդ դարեր)՝ կարծեք անզոր գտնելով իրեն՝ բարեշրջելու մահվան անվարան ընթացքը:

Է՛ մահ, թէ դու քէն ունիս,
Ի՝ Ադամայ որդին կու հանես.
Կամ մեղաց հարուած ես դու
Ի մահու պըտղէն ծընեալ ես[9]:

Երբեմն մահվան թեմայի մշտակա ներկայությունը ձեռք է բերում նոր ընդհանրություններ, և միջնադարյան գրականության մեջ նորնոր արծածվող պանդխտության թեման վերաձևվում է փիլիսոփայական խոր ընկալչությամբ: Սոցիալական աղետաբեր երևույթը ձեռք է բերում կյանքի անցողիկության ենթիմաստ, այս աշխարհում մահկանացուի՝ պանդուխտ լինելու սթափ գնահատություն.

[3] Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, Եր., 1960, էջ 373:
[4] Ֆրիկ, Բանաստեղծություններ, Եր., 1941, էջ 33:
[5] Նույնը, էջ 46:
[6] Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա, էջ 229:
[7] Նույնը, էջ 225:
[8] Նույնը, էջ 327:
[9] Նույնը, էջ 328:

Ամէնքս եմք ղարիպ, եղբա՛ր, հայրենի մարդ
իսկի չունի,
Հաւասար գնալու եմք մենք, զի այն կեանքն է
մեզ հայրենի[10],-

գրում է միջնադարյան տաղերգու Մկրտիչ Նաղաշը (14-15-րդ դարեր) «Տաղ վասն ղարիպի ասացել» քերթվածում՝ ակամա հիշեցնելով Մեսրոպ Մաշտոցի գողտրիկ շարականներից մեկը, ուր մեղքերից ու հանցանքներից երկյուղած շարականագիրը աղաչում է Տիրոջը՝ սրբագործելու, թողություն տալու իրեն՝ «անցավոր աշխարհի պանդուխտին» (Արտասուաց իմոց մի լռեր, Տէ՛ր,/ Զի պանդուխտ եմ ես յանցաւոր երկրի)[11]:

Միջնադարի մարդու անճարակությունը, մահվան արթնության և նրանից չզատվող վախի նյութը շարունակում են մնալ գեղարվեստական մտածողության մշտարծարծ խընդիրներից՝ դառնալով փիլիսոփայական կողմնորոշում: Ուշ միջնադարում հայ տաղերգուները շարունակում էին վարդի և բլբուլի այլաբանական պատկերներին զուգահեռ խոսել մահվան անխուսափելիության, մարդուն «դարանակալած» Գաբրիելի անակնկալ այցելության մասին:

Գրիգորիս Աղթամարցին (15-16-րդ դարեր) գարնան, ուրախության արբշիռ երգերի մեջ վարդի և սոխակի սիրավառ հանդիպումին զուգահեռ հանձնառու է լինում նկարագրելու մահվան հրեշտակի գալուստը:

Ահա օր մահուան կուգայ,
Գիտ բըժիշկ եւ ճար քեզ արա,
Յէգուց հրաւիրակըն գայ
Եւ ասէ՝ Աստի գընա[12]:

Ապրելու խորհուրդը պայմանավորվում է հոգևոր ներաճուն ազդակներով. ապրել, նշանակում է՝ կառուցել, տնկել, շենացնել, որոնել ու գտնել: Միջնադարյան տաղերգուի համար նորաշեն տունն ու այգին խորհրդանշում են կյանքը, ապրելու այլաբանությունը: Կյանքի համայնապատկերի նկարագրական և այդ նույն լայնալիր պատկերի գեղարվեստական հնարանքը տպավորում է դրվագային վիճակների հաջորդականությամբ:

Քար եմ բերեր սարերոյս
Փուշ եմ կըրեր ձորերոյս,
Պատ եմ բոլորեր այգոյս,
Ջուր եմ բերեր լեռներոյս,
Աղբիւր եմ շիներ այգոյս,
Ծաղիկ եմ տնկեր այգոյս,
Դեռ չեմ զհոտն առեր ծաղկոյս
Կ՝ասեն, թ՝Արեկ, ել այգոյս.-
Այս իմ նորատունկ այգոյս:[13]

Ամեն առավոտ և լույս այգի եկող մահվան հրեշտակին չհանձնվող մարդը ապրելու խորհուրդն իմաստավորում է արարումով, ստեղծումով, կառուցելու և շենացնելու համառությամբ: Սակայն մահվան անխուսափելիությունը անհաղթահարելի է, և ուժահատ, զղջահար բանաստեղծը ձեռնատուր է լինում.

Առին զհոգիս ի մարմնոյս,
Հանեցին զիս յիմ այգոյս,
Մահ է, որ ելնեմ այգոյս,
Այս իմ նորաշէն այգոյս:[14]

Իմանալին ու անիմանալին միախառնած տաղերգուն հասկանում է, որ կյանքի և մահվան կազմակերպ ընթացքը շարունակվելու է նաև իր մահից հետո: Ու երբ միջնադարյան մեկ այլ տաղասաց՝ Հովասափ Սեբաստացին ևս 16-րդ դարում իմաստասիրական որոնումներով կհասնի մահվան մատույցներին, կտեսնենք, որ կյանքի և մահվան ընկալչության մեջ շարունակվում են արթմնի, սթափ, զուսպ հոգեխոսությունները՝ «…Մէկըն երթայ, մէկըն գայ, / Իր բանըն պաթալ չի մնայ»: Այսպես է «աշխարհիս սահմանն»՝ ով ծնվում է, դեպի մահն է գնում, ուստի «մահը մտաց մի՛ հաներ»,- շտապում է հորդորել տաղերգուն՝ միաժամանակ խորհուրդ տալով գիտակցել, թե « Ուստ եկին և ու՞ր կու գնան»:

Ահա սա է հաճախադեպ, ոչ անակնկալ իրատես դիտարկումը, որը հանդիպում ենք նաև միջնադարյան տաղերգության վերջին ներկայացուցչի՝ Սայաթ-Նովայի (17-րդ դար) խորհուրդ-խրատների մեջ: «Աշխարհիս միզ մընալու չէ՝ իմաստնասիրաց խաբարով»- մտահոգ խորհրդածությունը դառնում է ճշմարիտ կեցության ծանրության կենտրոնը, «փանջարա» դարձած աշխարհին «մտիկ տվող» ու անցնող «մարթու» ընկալումների սահմանագիծը: Սակայն ազնվորեն նկատենք, որ մահվան գեղարվեստական փնտրտուք-

[10] Նույնը, էջ 338:
[11] Հայ գրականության քրեստոմատիա, Եր., 1992, էջ19:
[12] Նույնը, էջ 426:
[13] Նույնը, էջ 428:
[14] Նույն տեղում:

ները նախորդներից հետո լավագույնս արտացոլվեցին արևմտահայ և սփյուռքահայ գրական անդաստաններում: Նոր գրականության արևմտահայ թևի ուղեծրում ազգային միջնադարյան ավանդույթների և կլասիցիզմից հետո համաշխարհային գրականության, հատկապես ֆրանսիական ռոմանտիկական ավազանի միախառնության հետաքրքիր վերակազմումն ենք գտնում Պետրոս Դուրյանի (19-րդ դար) քնարերգության մեջ:

Նարեկացիական պոռթկումների լեզվով, հոգեբանական հակադրական կառուցիկ պատկերներով Պ. Դուրյանը, «անտեսելով ցաւի առարկայացումը, նետւում է ասպարէզ՝ հաստատելու կեանքի բերկրանքը, ապրելու թովչանքն ու իրաւունքը»[15],- գրում է գրականագետ Սուրեն Դանիելյանն ու հայտարարում. «Մահուան խորհուրդը եւ մարդու իմացական բեկումը այդ խորհրդին, յանուն մաքառումի ու կամքի տիրակալութեան, փիլիսոփայական խտացումի չերկրորդուած վկայութիւն է, գերերկրային կեցութիւն բանաստեղծական կալուածքում, որը դառնում է ստեղծագործական նոր համամարդկային նիւթի առաջին նուաճումը հայ գրականութեան մէջ»[16]: Մենք կավելացնենք, որ այդ նվաճումի անմիջական ազդեցությունները հետագայում տարածվեցին ու վերակառուցվեցին Միսաք Մեծարենցի, Վահան Թեքեյանի ստեղծագործություններում՝ յուրովի ու ինքնատիպ դրսևորումներով:

Պ. Դուրյանի կողմից աշխարհի ողբերգական ընկալումը, հեղինակի հետ նույնացող քնարական հերոսի ներանձնական տրտմությունը ծնում են մշտնջենական հարցադրումներ, որոնք մտատանջել են նաև միջնադարյան հայ տաղերգուներին՝ սկսած Գրիգոր Նարեկացուց: Մարտահրավերի պես Աստծուն նետված «ինչու»-ները դառնում են «կյանքի ու մահվան» դասական նյութի նորոգված, առավել հանդուգն փորձեր: Մարդու, կյանքի, աշխարհի նկատմամբ բանաստեղծի անսահման սերը դրսևորվում է գարնան, փթթող վարդի մշտարծարծ պատկերներով՝ միջնադարյան տաղերգուների հանգույն, հայտնի այլաբանության նորովի կենսավորմամբ: Այստեղ կատարենք մի մասնավորում. 1860-ական թվականների վերջին և 1870 թվականին գրված Պ. Դուրյանի քերթվածներում մահվան ծանրաբեռ, փիլիսոփայական ներկայությունը գրեթե բացառված է, սակայն աստիճանաբար մահվան և տրտմության տարրերը գերճնշում են լուսավոր ու կենսախինդ տրամադրություններին՝ առաջ բերելով պայքար ոչ թե սոսկ ապրելու, սեփական կյանքը շարունակելու արդար իրավունքը խլելու դեմ, այլ գեղեցիկի, մարդու, սիրո, հայրենիքի վերամբարձ, բարձրագույն խորհուրդների առաջ ունենալիք պարտավորությունների կիսավարտության համար:

Այդ ներանձնական բարձրագույն խորհուրդներից մեկը՝ հայրենիքին, ժողովրդին ծառայության պատրաստակամությունը, թերևս ամենամեծ մղումն է պայքարի ելած բանաստեղծի համար:

Հեք մարդկութեան մէկ ոստը գոս՝
Հայրենիք մը ունիմ թշուառ,
Չ՝օգնած անոր՝ մեռնիլ աննշան
Ո՜հ, ա՛յս է սոսկ ցա՛ւ ինձ համար:[17]

Մտահոգությունների այս երակը գնում և մերձենում է Պ. Դուրյանի նախորդի՝ հայ նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանի խորհրդածությունների նյութին: «Ազգասեր մարդու և իր մեռնելու վախտի» ճշգրտումը իր կողքին է պահում կյանքի և մահվան հակադրաբևեռ հարցը՝ փիլիսոփայական մտահղացքով՝ միաժամանակ արտահայտելով աշխարհիկ կյանքից անբաժան հայրենիքի առավելական, գերակա դերի նկատմամբ գրողի շահագրգռությունները:

Էս ճամփեն մեկ օր պետք է մենք գնանք,
Մահով էն կենքին հասնինք, դինջանանք:
Բայց մեռնել ես որ շուտ ուզում չէի,
Պետք գամ ազգիս՝ ախ՝ ասում էի:
…Իմ էն քաշած շունչն էլ մահ էր աչքիս,
Երբ չէի կարում պետքը գալ ազգիս:[18]

Երկու գրողների կողմից հայրենիքին նախընտրություն տալը ինքնաբուխ է, ավելին, մահվան ներկայությունը ընդունելի է նրանց համար, որովհետև հայրենիքի բարձրագույն իմաստը վեր է անհատի հոգեցունց, ճշմար-

[15] Սուրէն Դանիէլեան, Արեւմտահայ գրականութիւն. Տիտանի՞կ թէ՞ շարունակականութիւն, Եր., 2014, էջ28:
[16] Նույն տեղում:
[17] Պետրոս Դուրյան, Երկեր, Եր., 1981, էջ 63:
[18] Խաչատուր Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու 8 հատորով, Առաջին հատոր, Եր., 1948, էջ 197:

տագոչ աղաղակներից, անգամ եթե այն հնչում է արդար իրավունքով:

Մարդը՝ տառապանքների սկիզբը, ծնված օրից բռնում է պարտության ճանապարհը: Պոռթկումները, ֆրիկի պես ընդվզումը, բարձրամռունչ անեծքներն ու նախատինքը՝ ուղղված «ոխերիմ Աստծուն», ավելի են սրում բանաստեղծի մոլեգին սերը կյանքի նկատմամբ և վերահաստատում աստվածահայտնության անիմանալի սահմանը: «Տրտունջք»-ի մեջ մահվան հետ նախնական հաշտեցումը վերջնական է դառնում «Իմ ցավը» քերթվածում՝ մեկ և սրբազնագույն ուխտի՝ հայրենիքին օգնելու հանձնառությամբ: Այնուամենայնիվ, «Տրտունջք»-ում կառուցողական յուրահատկությունը՝ մի կողմից՝ ապրելու տենչը, մյուս կողմից՝ անհաշտությունը ճակատագրի հետ, ընդգծում են բանաստեղծի հանճարեղությունը՝ Պարույր Սևակի հետևյալ բնորոշմամբ. «Նրա քնարերգությունը հեծկլտոց լինելով, միաժամանակ մի Օվսաննա է, մահվան տվայտանք և կյանքի փառաբանում, կսկծի մրրկում և սիրո հափրանք»[19]:

Մահվան հարատև իմացականությունը բանաստեղծին պահում է հեղհեղուկ վիճակների մեջ՝ մերթ պոռթկուն-տարերային, մերթ հանդարտ-հաշտվողական, լամարթինյան «հովտի» անընդմեջ փնտրտուքով՝ որպես ինքնափախուստի հանգրվան: Երկու բանաստեղծների մեկուսացած հոգիների զուգահեռը արտացոլվում է Պ. Դուրյանի մոտ՝ լճակի, իսկ Լամարթինի մոտ՝ հովտի պատկերային համակարգերի մեջ: Երկուսն էլ «շիրմատան նեղ արահետին մեն-մենակ են» և երկուսի համար էլ անասելի հուսահատությունը խեղդվում է բնության գրկի մեջ:

Սակայն այստեղ բնությունն է, պատկե՛ր խոսուն,
Նետվի՛ր գիրկը, սիրում է քեզ, կանչում անվերջ[20],-

հորդորում է Ալֆոնս դը Լամարթինը:

Մելամաղձոտ լճակդ իմ
Քեզ հետ ըլլանք մտեիմ,-

առաջարկում է Պ. Դուրյանը, և երկուսն էլ դառնում են հրաժեշտ տվող, մեռնող այն քնարական հերոսը, որը լավ գիտի հավերժության գինը: Կյանք փնտրող և մահ գտնող արևմտահայ բանաստեղծը գծում է երկու «մարդերի» սահմանագիծ՝ սովորական մահկանացու և բանաստեղծ, որոնցից վերջինը երբեք չի հուսահատվում «…Բնա՛ւ, բանաստեղծ մը մահուանէ չը սոսկար. այն ատէն իրաւունք ունէի ցաւելու, երբ ամէնքն անմահ ըլլային, եւ ես միայն մահկանացու:

Այսպէս համոզուէ՛»[21] ,- գրում է Պ. Դուրյանն իր մտերիմ ընկեր Պ.Հ. Ճանֆեսճյանին: Ահա այս գիտակցությամբ է Դուրյան-բանաստեղծը գնում մահվանն ընդառաջ՝ հավերժության բացարձակ իմացությունն ապացուցելու համար:

Իմացության այս ճանապարհը ընթացք բերեց բանաստեղծական այնպիսի մեծությունների համար, ինչպիսիք էին Միսաք Մեծարենցը, Վահան Թեքեյանը, Մատթեոս Զարիֆյանը: Նրանցից հայ գրականության «հիվանդ ու հանճարեղ պատանին» (բնութագրումը Եղիշե Չարենցինն է.- Վ. Դ.)՝ իր նախորդի՝ Պ. Դուրյանի չափ թույլ ու տկար, պայքարում էր կյանքի դանդաղ ու սպանիչ ընթացքի դեմ ոչ թե աստծուն ձեռնոց նետելով, աստվածամարտությամբ կամ աստծուն հորջորջանքներ ուղղելով, այլ խոր բնապաշտական շեշտերով, հազար թելերով բնությանը կապկպվելով, ընդգծելով, որ մահվան և տրտմության գաղափարները չեն կարող գերազանցել լուսավոր հատկանիշներին, ինչը հընթացս ցույց է տալիս նաև Մ. Մեծարենցի՝ դասական ռոմանտիզմից հեռու լինելու և սիմվոլիստական հանդերձանքով իր արվեստը ներկայացնելու գեղարվեստական սկզբունքը:

Կյանքի հակոտնյա մահվան ուրվականը, մահվան սարսուռի ուղղագիծ նկարագրությունները հեռու էին Մ. Մեծարենցի քնարերգության պատկերային իմաստների հարաշարժ ընթացքից: Բնապատկերների մատուցումը և բնության դրվագների առարկայացումը միտված էին սրելու բանաստեղծի անսահման կենսասիրությունը ոչ թե որպես հիվանդության նախապայման, այլ որպես գեղագիտական հարցադրում: Դուրյանական «Աստվածը» Մ. Մեծարենցի մոտ «ոսկեծայր շառափներով բարի արևն» է, որի բոցեղեն ցանցերի մեջ, որպես ապրելու, չմահանալու

[19] Պարույր Սևակ, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 6, Եր., 1974, էջ 161:

[20] Ֆրանսիական պոեզիա, Եր., 1984, էջ 191:

[21] Պետրոս Դուրյան, Երկեր, էջ 48:

միակ առհավատչյա, անձնատուր «պլլվել» է ցանկանում բանաստեղծը: Բնության, արևի ամենափրկության հույսը հնչեցնում է աղերսանք-աղոթքը և բացառում ըմբոստության երգը: «Տրտունջք»-ի չափ ծրագրային «Արևին» քերթվածում հասունանում է ապրելու կրքի էներգիան, կուտակվում և պարպվում բնության «դաբիրների» վրա՝ նորոգելու, վերստեղծելու սրբազան խոստմամբ:

Պ. Դուրյանը «Տրտունջք»-ում մինչև վերջ խուսափում է արևին ապավինելուց: Եթե Մ. Մեծարենցը թախանձում է արևին՝ խանդաբորբ ու կաթոգին փարվելու իր հոգուն, ապա Պ. Դուրյանը աղերսում է աստղերին՝ իր հոգու մեջ ընկնելու, կայծ ու կրակ տալու: Մտքի և պատկերի ենթակայական ընկալումը հաշվի առնելով՝ գրականագետ Ս. Դանիելյանը Պ. Դուրյանի կողմից արևից խուսանավելը բացատրում է առարկայական հետևյալ արտահայտությամբ.

Գարունն ոչ մէկ վարդ ճակտիս դալկահար,
Ոչ երկնի շողերն ժպիտ մ՝ինձ չեն տար:[22]

Այսինքն՝ Պ. Դուրյանն արևից ակնկալիքներ չունի ի տարբերություն իր հաջորդ գրչեղբոր, որը թևատարած սպասում է կրակի, ջերմության, լույսի կայծերի:

Եթե Պ. Դուրյանի մոտ ցասումն ու ընդվզումը պայմանավորված են ապրելու մեջ կրած պարտությամբ, ապա Մ. Մեծարենցը ո՛չ ընդվզում է, ո՛չ էլ խոնարհվում: Նրա մոտ չկա «պարտված հերոս», այլ մահվան գավթում կանգնած ու կյանքի, մարդու հավերժական փիլիսոփայության բևեռները շոշափող «անփորձ պատանի»:

Ահաբեկիչ կնճիռներուն մէջ կեանքին
Լալայառաչ, սուր հծծիւններ ինձ ըսին.
«Ամէն յոյսեր մեծ պարապին կը հանգին,
Ունայնութիւն մը կը պրկէ կեանքը սին:
Ամէն ծաղիկ խամրում մ՝ունի իրեն մօտ,
Ու ամէն կեանք՝ մութ ստուեր մը իր ետին.
Ծաղիկներու բուրումին պէս խնկահոտ
Ամէն յոյսեր դեռ չընծլած կ՝անհետին»[23]:

Ճշմարտության իմացության ճանապարհը Մ. Մեծարենցի մոտ ձեռք է բերում անանձնական ուրախությամբ ինքնաբաշխվելու, ինքնատրվելու, որպես սիրո վաղվա հունդ «մարդերի» մեջ սերմնավորվելու քրիստոնեական խորհուրդ: Նա գրում է «Արդի մարդու Հայր մերը», որը ոչ թե հնչում է միջնադարցու աղոթքի պես՝ «լուսոյն օթաղն», «աստծու սենյակը» մտնելու ապահով հույսով, այլ դառնում է սիմվոլիստական հայեցողությամբ՝ ապրելու յուրատեսակ նախասիրություն, կեցության մեծարենցյան ձև:

Սիմվոլիստական պատկերների համակարգում կյանքի և մահվան գեղարվեստական խորհրդածությունները կարևոր տեղ են գրավում: Ժխտելով կամ գրկաբաց ընդունելով մահը՝ սիմվոլիստ բանաստեղծներն արտահայտում էին ապրած օրերի խորհուրդը, իսկ ապրելիքի մեջ՝ ներքին խաղաղության, ներդաշնության ձգտումը:

Սփյուռքահայ գրականության «խորախոհ բանաստեղծը» (բնութագրումը Վազգեն Շուշանյանինն է.- Վ. Դ.)՝ Վահան Թեքեյանը, անակնկալ հոգեհարազատություն զգալով իրեն ֆրանսիական սիմվոլիստական երգի ավազանում, անթաքույց հետաքրքրություն է ցուցաբերում մահվան թեմայի հանդեպ:

1944թ. փետրվարի 26-ին Կահիրեից իր մտերիմ բարեկամ Ֆիմի Օհաննեսյանին ուղարկած նամակում խոստովանում է. «…Մահէն չվախնալով յանդերձ, պիտի ուզէի, եթէ կարելի ըլլար, վերապրիլ կեանքս նոյն կամ քիչ մը տարբեր…[24]»: Սա մահվանը դեմառդեմ դուրս գալու հանդգնություն էր, ավելի շուտ՝ անմահացումի հետաքրքիր պահանջ, վերստին ապրելու փափագ՝ նոր որակով ու բովանդակությամբ, որի գեղարվեստական հետագիծը մենք տեսնում ենք իր աշակերտի՝ սփյուռքահայ էպիկ բանաստեղծ Նիկողոս Սարաֆյանի պոեզիայում՝ հետևյալ ձևակերպմամբ՝ «մեռնիլ առանց մահի»՝ նորանալու, թարմանալու խորհրդանշումով:

«Ես՝ պարտուած մը կեանքէն»- Վ. Թեքեյանի կողմից ավելի վաղ ձևակերպված նշանաբանը հետագայում հաղթանակներ է փնտրում սիրո ոստայնի մեջ:

Տէ՛ր, ի վերջո, երբ նվաղի լոյսը կեանքիս
Վերջին շնորհ պիտի ուզեմ...[25]

Խորհրդավոր պատկերը՝ այն օրերից հիշատակված «անուղղա» աչքերով և նույն ժպի-

[22] Պետրոս Դուրյան, Երկեր, էջ 53:
[23] Միսաք Մեծարենց, Երկերի լիակատար ժողովածու, Եր., 1981, էջ 35:
[24] Թէքէեան Վահան, Նամականի, Լոս Անջելես, 1983, էջ 259:
[25] Վահան Թեքեյան, Հատընտիր, Եր., 1970, էջ 33:

տով, թող ջերմացնի իր ամառվա իրիկունը: Սա՛ է բանաստեղծի ցանկությունը: Ցավոք, ամառվա հրայրքին կարոտ բանաստեղծը կյանքի աշունին ընդառաջ է գնում սիրո անհագ ծարավով: «Ամառն անցա՞վ» - զղջումը ցավ է պատճառում բանաստեղծին ճիշտ այնպես, ինչպես իրեն այնքան մոտ ու սրտակից ֆրանսիացուն՝ Շառլ Բոդլերին.

Ամառ էր երեկ. հիմայ աշուն է արդէն.
Խորհրդաւոր այս աղմուկն ալ ազդ մը չէ՞
մեկնելու[26],-

կարդում ենք թեքեյանական անզուգական թարգմանությամբ:

Անհանգիստ, «սպասման հիվանդ» է նաև Էմիլ Վերհառնը: «Նոյեմբեր է իմ հոգում»[27],- մի տեսակ ինքնահաշտեցմամբ գրում է բելգիացի բանաստեղծը՝ ետդարձի ճամփան կորցրած, ինչին նույնքան իմաստնացած արձագանքում է սփյուռքահայ բանաստեղծը.

Կարծես վերջին աշնանս իրիկունն ըլլար,
Ուր տենչերով ալ խաղաղուած հաւիտեան՝
Սպասէի մահուան, վայրկեան առ վայրկեան:[28]

Մահը սրբացնելու և փիլիսոփայական կշռի բերելու սիմվոլիստական առանձնահատկությունները դրսևորվեցին Վ. Թեքեյանի քերթվածներում, մասնավորապես «Մահուան տաղեր», «Խաւարի տաղեր» շարքերում:

Սիմվոլիստական գրականության զինանոցին հարազատ, «հավերժական հերոսուհի» մահը շարունակում է մնալ որպես գլխավոր նյութ՝ ապահովելով գեղարվեստական մտածողության ինքնատիպ, չերկրորդված մակարդակ: Ստեֆան Մալարմեն, օրինակ, մահը համարում էր բալասան խոնջացած բանաստեղծի համար, իսկ Շ. Բոդլերը մի ողջ «Մահ» խորագրով բանաստեղծական ենթաշարքում քննելով կյանքի և մահվան հարցերը, մահվան երազով տարված՝ այն ընկալում է որպես խորհրդավոր, առեղծվածային հաճույք, անդորրություն՝ կյանքի տանջանքներից հետո:

Մահն է, որ մեզ կը սփոփէ, աւա՜ղ, եւ մեզ կ՝
ապրեցնէ,
Ան նպատակն է կեանքին ու միմիակ Յոյսն է
ան,
Որ դիւթաջուր մը ինչպէս կ՝ոգեւորէ, կ՝
արբեցնէ
Եւ սիրտ կուտայ քալելու մինչեւ իրիկունը
օրուան:[29]

Շ. Բոդլերը «Արվեստագետի մահը» քերթվածում մահը դիտում է իբրև արշալույս, իբրև Արև, որին պատրաստ է սլանալու Արվեստագետի հոգին:

Մի հույս ունեն լոկ…
Որ մահն ինչպես նոր արև իր լույսերը կ՝հեղի:[30]

Ահա այս քնարական մտորումները ընտանի ու հարազատ են դառնում նաև սփյուռքահայ բանաստեղծի համար: Կրելով բոդլերյան քերթության ուղիղ ներգործությունը՝ Վ. Թեքեյանը գրում է «Մահ եւ արեւ» քերթվածը:

Մահն եղած է ինձ այնչափ ընտանի,
Որչափ աչքերուս արեւը վաղուան…
Մահ, արեւ, այնչափ խառնուած միմեանց
Կ՝երեւին ինծի, որ մերթ կը խորհիմ՝
Միգուցէ արեւն ըլլայ մահ մ՝անանց
Եւ մահն ալ՝ արեւ մ՝անդրը, քան շիրիմ…[31]

Վ. Թեքեյանի նախընտրությունը երկու մահերի միջև է. կա՛մ հաճույքի գրկում, սիրո ոստայնում ընդունած մահահրավեր, կա՛մ կռվի դաշտում, վրիժաբորբ ու հրաչվի մարտակռվում սպասող մահ: Բանաստեղծի ցանկությունն անակնկալ է.

…Այս երկու մահերուն կը փափագիմ փոխն ի
փոխ,
Անոնք ինծի կը ժպտին եւ կը ժպտիմ ես
անոնց,
Անոնց մէջտեղ իմ հոգիս կարծես կեցած է
շատոնց…[32]

Բանաստեղծի կյանքը եղել է պարտեզ, որը ոտնակոխ են արել «դիպվածն» ու «ճակատագիրը», և հիմա, երբ արվեստագետը մահվան տեսիլի ուղղորդմամբ քայլերը դարձնում է դեպի մահվան հարթակը, ցանկությունը դառնում է ելքի սեփական նախընտրությունը.

Գոնէ թոյլ տուր, աստուա՜ծ իմ, որ ելքն անոր
ես ընտրեմ:[33]

Մահվան անհամբեր, սրտաբաց սպասումները սիմվոլիստների մոտ արտառոց չէին: Շոպենհաուերյան հանդարտությամբ է հնչում Վ. Թեքեյանի խոստովանությունը. «...Ես մահ-

[26] Շառլ Բոդլեր, Չարի ծաղիկներ, էջ 279:
[27] Эмил Верхарн, Стихи, 1961, Ленинград, стр. 44:
[28] Վահան Թեքեյան, Հատընտիր, Եր., 1970, էջ 18:
[29] Շառլ Բոդլեր, Չարի ծաղիկներ, էջ 320:
[30] Նույնը, էջ 136:
[31] Վահան Թէքէեան, Գաղտնի պարտէզ, Պէյրութ-Երեւան, 2003, էջ 67:
[32] Նույնը:
[33] Նույնը:

ուան կը նայիմ հիմայ անհոգ, անտարբեր»[34], թեև ավելի ջերմ կարող են թվալ ռուս սիմվոլիստ Ֆյոդոր Սոլոգուբի խոսքերն՝ ուղղված իր «հեռու, խորհրդավոր ընկերոջը»՝ մահին: Ֆ. Սոլոգուբի չափ «մահասեր» է նաև Վալերի Բրյուսովը, որը հնչյակներից մեկում բացականչում է.

Смерт! Обморок не выразимо-сладкий.[35]

Եվ վերջապես պակաս հետաքրքիր չէ մահվան փիլիսոփայության բլոկյան ընկալումը.

Все чаще вижу смерть – и улыбаюсь
Улыбкой рассудительноы,[36]

որտեղ մահվան խորհրդավոր ժպիտը ազդարարում է այս կյանքի ավարտը ու նոր իմաստնության սկիզբը՝ հիշեցնելով Շ. Բոդլերի «Օրվա վերջ»-ում մրմնջացող քնարական հերոսի խոսքերը.

Վերջապես: Վերջ այս կյանքին,
Մահվան տենչով առլեցուն
Իմ սիրտը և իմ հոգին
Կվայելեն հանգիստ քուն.
Պատի՛ր ինձ քո պատանքում,
Օ՜, մթություն ցրտագին:[37]

Բոլոր արվեստագետները որոնում են իրենց գեղագիտական իդեալը: Անընդմեջ փնտրտուքները երբեմն ապարդյուն են ու անպտուղ: Վ. Թեքեյանի ձևակերպմամբ՝ «ոսկեթել աստղերը» բոդլերյան «կուռքի» նույնական սիմվոլիկան են՝ որպես իդեալի հնարավոր մարմնավորում, որին ձգտում ու փնտրում են, իսկ երբ չեն հասնում կամ չեն գտնում, նրանց Կապիտոլը դառնում է Մահը[38]՝ որպես իդեալի փնտրտուքի խորհրդանշական ավարտ: Արվեստագետին այլ բան չի մնում, քան բարեկամանալ Մահի հետ, պատրաստ լինել գնալու մահվան հետևից, ինչպես զավակը՝ ծնողի.

Մահ գեղեցիկ, Մահ վսեմ,
Կը սպասէի քեզի ես
Ու հետդ ահա կը քալեմ՝
Խելօք ու լուռ զաւկիդ պէս[39],-

գրում է Վ. Թեքեյանը:

Քանի դեռ մահը հեռու է, նրա մասին մարդիկ խոսում են թեթևացած ու շարունակում նույնքան թեթև ընդունել «մահահրավերները», սակայն մահվան մեծացող հասակը և մերձեցումը այդ հասակին պարուրում են բանաստեղծին լուրջ և ուժեղ մտածումներով: Մահվան հավերժությունը պատրաստվում է «առնել» բանաստեղծի անցավոր կյանքը, ու մահվան անունը որոճացող բանաստեղծը կամաց-կամաց գնում է դեպի մթողող գուբը, որով դարեր են անցել, և որը սպասում է դարերի:

Կյանքի և մահվան խորհրդի թեքեյանական դրսևորումները արձագանքվում են արևելահայ գրականության բարձրագույն գագաթներից մեկի՝ Վահան Տերյանի պոեզիայում: Նրա համար մահը մի դեպքում «դահիճ» է , մի այլ պահի՝ «քույր», մի դեպքում «թույն», բայց և մյուս ակնթարթին «թախիծ», «ցուրտ համբույր», «այրող բոց» և այդ հակադրությունների մեջ մահը մնում է բանաստեղծի համար անվախճան ու անհագուրդ սիրո աղբյուր:

Փռված եմ ահա քո գեղեցկության,
Քո անքննելի կարողության դեմ...
-Հայտնվի՛ր անհուն փայլով ու փառքով,
Ժպիտդ փռի՛ր իմ երկրի մթում...[40]

Նրբանկատ ու սուր է մահվան տերյանական խորհրդի այն մեկնությունը, որ տալիս է լիբանանահայ բանաստեղծ Մուշեղ Իշխանը. «Մահը իր աչքին կը ներկայանայ իբրեւ ամենաբոյժ եւ ամենակալ հանգստարան, իբրեւ գերագոյն լռութիւն, որուն մետաքսէ թեւերը պիտի փռուին իր վէրքերուն վրայ եւ անհունօրէն պիտի օրօրեն իր մեծ նինջը»[41]:

Կյանքի և մահավան գեղարվեստական հարցադրումները հետաքրքիր նշանառությամբ բացվեցին արևմտահայ գրականության վերջին ներկայացուցչի՝ Մատթեոս Զարիֆյանի բանաստեղծություններում: Զինադադարից հետո ընթերցողի սեղանին դրված երկու վտիտ ժողովածուները՝ «Տրտմութեան եւ խաղաղութեան երգեր» (1921), «Կեանքի եւ մահուան երգեր» (1922), բացում էին Պ Դուրյանի, Մ. Մեծարենցի, Վ. Տերյանի բախտակից պոե-

[34] Նույնը:
[35] Брюсов Валерий, Избранные сочинения, Москва, 1980, стр. 115:
[36] Блок Александр, Собр. соч в 7 – и томах, т. 1 Москва, 1973, стр. 68.
[37] Շառլ Բոդլեր, Չարի ծաղիկներ, էջ 137:
[38] Կապիտոլը բլուր է Հռոմում, որի գագաթին կառուցված է Յուպիտերի տաճարը: Բառն ունի գործի, ճանապարհի ավարտի փոխաբերական իմաստ:
[39] Վահան Թեքեյան, Հատընտիր, էջ 62:
[40] Վահան Տերյան, Բանաստեղծությունների լիակատար ժողովածու, Եր., 1985, էջ183:
[41] «Հասկ»/Հայագիտական տարեգիրք, Նոր շրջան, Անթիլիաս - Լիբանան, Ա տարի, 1980, էջ 45:

տի՝ կյանքի և մահվան խոր փիլիսոփայության փնտրտուքների աշխարհը: «Մահուան այդ տժգոյն խոսեցողներու մէկ անդամը»[42] (բնութագրումը Արշակ Չոպանյանինն է.- Վ. Դ) լինելով՝ Մ. Զարիֆյանը իր բանաստեղծական աշխարհի մեջ կրում էր ֆրանսիական սիմվոլիստական գրականության քնարապաշտ ազդեցությունը, թեև ինքնուրույն պատկերներն ու հուզական ինքնեկ շեշտերը ակնբախ էին ու անթաքույց:

Մ. Զարիֆյանը բաց է միջավայրի առաջ, խառնվածքով հեռու ինքնասույզ մելամաղձից: Մահվան շուրջ անդադար խորհրդածությունները չեն մղում նրան ինքնամեկուսացման կամ դուրյանական դառնաղի հիասթափության: Տրտմությունից դեպի խաղաղություն ձգտող բանաստեղծի հոգին կենսասիրության գիտակցությամբ անտեսում է մահվան սարսուռները՝ սեփական հաղթանակը ամրագրելով մահվանն ուղղված անզիջող հեգնանքով: «Անսահման ծիծաղ մ՚ունիմ քեզի դէմ»[43],- հանդուգն նետում է բանաստեղծը: Նա լավ գիտի, որ մահը չի կարող կասեցնել մարդկային մտքի սուրանքը՝

Եւ այս վարդով, այս գարունով
Կը հեգնեմ Ան, որ կուգայ.
Ան որ կուգայ՝ հողին քունով
Քընացընել Ցաւն յսկայ…[44]

Մահին դիմագրավելու այս յուրահատկությունը հիշեցնում է սփյուռքահայ արձակագիր Վազգեն Շուշանյանին, որը մահվան դեմ տարվող հաղթանակը գտնում է կյանքի գեղեցկության և հրճվանքի մեջ: «Մեռնելու հաճոյքը,- կ՚ըսեմ տրտում, ամէն օր մեռնելու հաճոյքը գաղափարի ու յաղթանակի համար, ամէն օր, հանապազօր կռուի ընթացքին»[45]: «Մեռնելու հաճույքը», որքան էլ պարադոքս է ու զարմանալի, օգնում է արվեստագետին նոր գաղափարների, նոր հաղթանակների համար հանապազ մղվող կռվով իմաստավորելու կյանքը, զորացնելու հույսի ներապրումը[46]:

Մահը կուգայ իր արծաթէ մանգաղով.
Եկուր, քնար, դէմ գանք անոր նոր տաղով[47],-

արարման պատրաստակամությամբ հորդորում է Մ. Զարիֆյանի քնարական հերոսը:

Տառապանքի և մահվան ճակատագրական անհույս փնտրտուքները Մ. Զարիֆյանի աշխարհում պսակվում են խաղաղության սփոփանքով: Տառապանքը սովորեցնում է բանաստեղծին ճիշտ և ճիշտ Վ. Շուշանյանի հերոսի կանխազգացումների պես: Մահվան հետ հավանական հանդիպումը կյանքի պահած «ապերախտություն է»: «Կ՚ըսեն թէ մահը մէկ է... Մահը մէկ չէ, ու փառաւոր վախճաններ կան, որ երբեք իմս պիտի չըլլան: Եղկելիօրէն պիտի մեռնիմ՝ կրելով այս կմախքին վրայ անաւարտ ու աղարտեալ կեանքի մը բեռը»[48],- գիշերային տվայտանքներին է տրվում Վ. Շուշանյանի հերոսը:

Հաճույքները ապրեցնում են մարդուն, իսկ սիրո հաճույքը՝ առավել ևս: Սիրային մտերմությունը զորեղացնող է, և նույնիսկ ճամփան, «որ զիս մահուան պիտի տանի, կըլլայ այնպէս ընտանի»[49],- խոստովանում է երազի, կյանքի և մահվան երգիչը՝ Մ. Զարիֆյանը: Երազները կարևոր են մարդու համար: Երազալի «մարդու օրհասը շքեղ է»,-բոլորի համար անակնկալ եզրակացնում է Մ. Զարիֆյանը: Լավ է, երբ մարդու հոգին ճախրանք ունի, վերելքի ուղղագնա ճանապարհ՝ որի հանգրվանը Անհունն է: Այդ Անհունը մենք սովոր ենք չափել թումանյանական կշռաքարով, որի ծանրությունը համամարդկային խոհերին բարձրից նայողի ամենատեսությունն է, այնինչ Մ. Զարիֆյանը նախընտրում է Սիրո առջև խոնարհաբար ծնրադրումը՝ քաոսից ու անդունդից դեպի աստղերի Անհունը բռնած ուղղաթռիչ վերելքի նպատակամղմամբ: Սիրո ոստայնը իր մեջ է առնում բանաստեղծի հոգին, պարուրում հեթանոսական վայելքի ազատությամբ ու հանդգնությամբ: Հեշտանքի գինին պարպելուց հետո սանձարձակ համարձակությամբ քերթողը ծաղրում է «այս կեանքին սրբութիւնները դժխեմ»: Ազատությունն ու

[42] Արշակ Չոպանյան, Երկեր, Եր., 1988, էջ 679:

[43] Ցեղին սիրտը, Արևմտահայ բանաստեղծություն, Եր., 1991, էջ 686:

[44] Նույնը, էջ 671:

[45] Վազգէն Շուշանեան, Երկիր յիշատակաց, Եր., 1966, էջ 208:

[46] Սփյուռքահայ հանճարեղ գրող Կոստան Զարյանն իր «Միացյալ Նահանգներ» գրքում հետևյալ ձևակերպումն է անում. «Եվ մահը ուրիշ բան չէ, եթե ոչ նախածընունդ»՝կարծեք հավելվելով Վ. Շուշանյանի՝ «մահվան հաճույքի» հայտնի ձևակերպմանը՝ որպես հաղթանակի, գաղափարի, գործի ծնունդի նախապայման: Կոստան Զարյան, Միացյալ Նահանգներ, Եր., 2002, էջ 242:

[47] Արշակ Չոպանյան, Երկեր, էջ 676:

[48] Վազգէն Շուշանեան, Ընտրանի, Եր., 2010, էջ 386:

[49] Ցեղին սիրտը, Արևմտահայ բանաստեղծություն, էջ 685:

վայելքը դառնում են հորդահոս, բայց ոչ ինքնանպատակ: Ապրելու հեթանոս բովանդակությունը առաջին բնագծի վրա է պահում մահվան՝ պայմանականություններից դուրս ներկայությունը:.

Լեցու՛ր, լեցու՛ր, որ խմեմ,
ՄԱՀՆ է ահա աչքիս դէմ[50],-

գրում է Մ. Զարիֆյանը:

Բանաստեղծի չդադարող կենսասիրությունը անթաքույց է ու զարմացնող: «Տէ՛ր Աստուած, արդեօք ուշ չէ՞» - կրծող կասկածանքը չի թուլացնում կյանքը՝ որպես հոյակապ հրաշալիք ընկալելու քերթողի անհատնելի կարողությունը:

Հակադրվելով սիմվոլիստներին հարազատ մահավան առաջնայնության գեղարվեստական սկզբունքին՝ Մ. Զարիֆյանը ծառանում է մահվան դեմ, փարվում կյանքին՝ «իր կմախքացած բազուկների ողջ յուսահատութեամբը» պաղատելով նրան չլքել իրեն:

Մ. Զարիֆյանի «հայտնաբերած» գեղարվեստական կարգախոսը՝ «կյանքի և մահվան երգեր», ներհատուկ եղավ սփյուռքահայ բանաստեղծության ամենից տեսլապաշտ և երազալի պոետին՝ Մուշեղ Իշխանին: Կյանքի և մահվան խորհրդածությունները ծրագրային նշանառությամբ բացվեցին հատկապես «Տառապանք» (1968), «Արեւամար» (1986) ժողովածուներում, որոնցից մասնավորապես վերջինի խորագիրն արդեն հուշում էր մահվան անբացառելի ներկայությունը:

Կյանքը երազ դարձրած և երազը կյանքի պես ապրող ռոմանտիկ Մ. Իշխանը, փորձելով նորովի բացահայտել տառապանքը, չի թաքցնում իր անհաշտությունը իրական կյանքի հետ և միաժամանակ փարվածությունը երազին ու ցնորքին:

Մարդն իր ծնունդով յուրաքանչյուր օր արշավում է դեպի մահը՝ ձեռքում պահած մահվան տոմսակը՝ հիշեցնելով շոպենհաուերյան այն շողարձակող միտքը, թե մարդն իր կյանքի ընթացքում ամեն պահ սպասում է մահվան և գնում նրան ընդառաջ: Կյանքը դառնում է մի յուրատեսակ հերթափոխ՝

Նախ յուղարկաւոր, ապա՝ ուղեւոր
Մարդիկ փոխն ի փոխ, մարդիկ գլխիկոր
Կը քալեն մահուան…

Ու կեանքը երբէք չ՝ ըներ յուսախաբ
Ան, որ յարաշարժ կամ կիսամըրափ
Կը սպասէ մահուան…[51]

Սակայն այս կյանքում «սարսափելին մահը չէ», այլ մահվան զուգադրությամբ կյանքում ֆիզիկապես ապրողի բութ, բացակա գոյությունը: Նույնն է ճամփան հինգ դար առաջ, հինգ դար հետո, երեկ, այսօր, սակայն տաղտուկը նույնաձև օրերի հերթափոխի մեջ չէ, այլ կյանքի ալիքի բացակայության: Մարդու կենսազուրկ գոյությունը ձանձրացնում է:

Կ՝ ըսեն շատ կարճ է կեանքը,
Շուտ կ՝ կասի սրտին զարկը,
Բայց արեւուն տակ ծիրանի
Երիտասարդ ու ծերունի
Ահա կեցած շարան-շարան
Կ՝ ձանձրանան...[52]

Մ. Իշխանից շատ առաջ արևմտահայ բանաստեղծ Ռուբեն Սևակը ևս փորձում էր ճշգրտել մարդ-մահկանացուի կեցության ուղենիշը, ինչը ընդգծում է երկու քերթողների բանաստեղծական հոգեհարազատությունը, պատկերային և ոճային մերձավորությունը:

Ահա՛ Մարդերդ: Ահա՛ Մարդերդ ալ,
Աստվա՛ծ,
Տխուր հյուրերն այս հրաշագեղ աշխարհին,
Թափառական, վաղորդայնե՛ն ընկճված,
Ճղճիմ, թշվառ, հողին կառչած, ախտագի՛ն:

Ճակատագրին մտրակին տակ խելահե՛ղ,
Անոնք կուլան ու կը վազեն մտացի՛ր,
-Իրենց ճակտին վրա Մահվան գիրն ահեղ-
Անոնք զոր Դուն պատկերիդ վրա ձևեցիր:[53]

Մահվան գաղափարը մղում է մարդուն հաշվեփակի, հաշվեհարդարի: «Կյանքս ըրած կայարան» գերխիտ պատկերային կառույցը զարմացնում է իր դիպուկությամբ: Շուրջը մարդիկ են, աղմուկ, կապած ծրար, պայուսակ, իսկ քնարական հերոսը սպասում է երջանկության և բախտի բացառիկ ճեպընթացին:

Սպասում չունեցող մարդը, որ վաղուց հուղարկավորել է սեփական հավատն ու սերը, դառնում է ստվերի պես մոլոր ու թափառիկ: Քայլերի անտարբեր ու ինքնանպատակ ընթացքը «ոչ մէկ տեղ կը տանին»,- ազդա-

[50] Նույնը, էջ 692:

[51] Մուշէղ Իշխան, Արեւամար, Պէյրութ, 1986, էջ 139:

[52] Նույնը:

[53] Ցեղին սիրտը, էջ 561:

րարում է Մ. Իշխանը: Մնում է քարշ տալ օրերի անիմաստ բեռը սեփական տկար ուսերի վրա՝ որպես անպատասխանատու կեցություն և ապարդյուն գոյություն:

Ալ չես գիտեր՝ որն է վատ,
Ո՞րն է իրաւ, ո՞րը սուտ,
Օրերու բեռն անիմաստ
Այդպէս շալակած ուսերուդ:[54]

Բանաստեղծի կողմից կյանքի և հավերժության հարցերի նորովի քնությունը հիացնում է մեզ: Սահմանափակ դիպախաղի հմուտ կիրառությամբ մեր առջև հաջորդիվ գալիս են նույն հերոսի երկու երեսները՝ մեկը՝ անցյալի փորձառությամբ, «մրգահասի լիությամբ» ծանրաբեռ ավագ ես-ը, մյուսը՝ անփորձ պատանին՝ ներկայով ապրող, հիացող ու զարմացող, որպես մյուս ես-ի շարունակություն: Սերունդները հաջորդում են իրար, մեծ Թումանյանի բանաձևմամբ՝ «Հերթով գալիս, անց ենք կենում էս անցավոր աշխարհից»[55]: Կարևորը ապրելուց հետո հետագիծ թողնելն է՝ թումանյանական այն ոսկե պատգամի համաձայն, թե՝ «Մահը մերն է, մենք մահինը,/ Մարդու գործն է միշտ անմահ»[56]՝ չմոռանալով, որ ամեն ինչ կատարվում է պատմության անաչառ հայացքի տակ:

Երբ սիրավառ ու հիացիկ կը նայիս դուն
Գարնան շքեղ ծաղիկներուն ու ծառերուն,
Յիշէ՛, որ նախ քեզմէ առաջ է՛ս նայեցայ,
Եւ աչքերուս լոյսը պայծառ հող է հիմայ:[57]

Բանաստեղծական այս տողերը իրենց նշանակությամբ և ճանաչողական խորքով համարժեք են Ավետիք Իսահակյանի «Ռավեննայում» բանաստեղծության մեջ հնչող հետևյալ խոր կենսափիլիսոփայությանը.

Հերթը հիմա քոնն է մի պահ.
Դու էլ նայիր սեգ ճակատին
Ու անցիր...[58]

Այս կյանքում ամեն մի բարձունք նայում է հավերժական վիհին, ու «տարօրինակ, տարօրինակ մարդ արարածը» շարունակում է ապրել՝ չհավատալով մահվան հնարավոր ներկայությանը:

Կը զգաս դէմքիդ մահուան քամին եւ հողմաւար,
Կ՝իյնայ անշունչ, սակայն մահուան չես հաւատայ[59],-

հեգնում է Մ. Իշխանը: Այնինչ մահը միշտ եղել է, երբ մենք դեռ չկայինք, մահն իշխել է դարեդար, գրքերը պատմել են իր մասին, մարդիկ լսել են, բայց չեն հավատացել: Մահվան անկորնչելի ներկայությունը որպես անշարժ շիրմաքար, որպես կմախք, գանգերի ցուրտ ծիծաղ, մարդկանց շուրջը պար է բռնել, սակայն այն միշտ թվացել է սուտ ու անիրական: Ու երբ մահն իր «զոհին» սկսել է փնտրել այնտեղ, ուր քնարական հերոսը տաք ու թվացյալ ապահով բույնն է հյուսել, այլևս աներկբա է եղել, «թէ իսկապէս մահը կայ» :

Հաճախ է բանաստեղծը զարմանալի ձևակերպումներ տալիս մահվան սպասումի վերաբերյալ: Մենք բոլորս այս կյանք գալիս ենք «անցվորի» անգիտությամբ, ապրելու հերթափոխը անցնում է սերնդից սերունդ և օրվա անցուդարձի մեջ ինքնամոռաց՝ չենք գիտակցում մեր բռնած ուղու հանգրվանը: Մ. Իշխանը սթափեցնում է մեզ.

Նախ՝ հուղարկավոր, ապա՝ ուղևոր
Մարդիկ փոխնիփոխ, մարդիկ՝ գլխիկոր
Կը քալեն մահվան:

Սակայն պետք չէ կարծել, թե Մ. Իշխանը հոռետես բանաստեղծ է: Կյանքի և մահվան հակամարտ դրսևորումը, նորովի բացահայտելով անուղղա ռոմանտիկ հեղինակի անհաշտությունը կյանքին, միաժամանակ ցույց է տալիս աշխարհի ցավով հիվանդ բանաստեղծի կապվածությունը նույն աշխարհի հևքին:

Այսպիսով, գարականության տեսաբաններրի կողմից «հավերժական թեմա» բանաձևումը իր սահմանների մեջ է առնում կյանքն ու մահը: Գրականության մեջ մահվան գերակա ներկայությունը, մահվան չափումի խորությունը մնում են տիրական ու աննվաճ: Առեղծվածային ծնունդի և նույնքան առեղծվածային մահվան փնտրտուքները թվում է, թե հասցնում են մեզ իմացականության սահմաններին, սակայն կյանքի ստեղծագործական ընկալման տրամաբանությունը, նրա նկատմամբ խորքային մոտեցման արդյունքները կրկին մնում են կիսատ ու շարունակելի:

[54] Մուշեղ Իշխան, Երկեր, Եր., 1990, էջ 220:
[55] Հովհաննես Թումանյան, Ընտիր երկեր, հ. 1, Եր., 1985, էջ 287:
[56] Նույնը, էջ 288:
[57] Նույնը, էջ 214:
[58] Ավետիք Իսահակյան, Երկ. ժող. 6 հատորով, հ. 1, Եր., 1973, էջ 328:
[59] Նույնը: